# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

**N3008 - Ա** **20 ապրիլի 2009թ.**

ՄԱՐՏԻԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՆՐԲԱՆՑՔԻ Հ. 21 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՌՈԲԵՐՏ ԻՇԽԱՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ, ԷԴՈՒԱՐԴ ԻՇԽԱՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ, ՆԱՐԻՆԵ ԻՇԽԱՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ, ԲՈՒՐԱՍՏԱՆ ՍԱՄՍՈՆԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Ռոբերտ Իշխանի Մարտիրոսյանի (ծնված 02.10.1963թ.), Էդուարդ Իշխանի Մարտիրոսյանի (ծնված 25.04.1965թ.), Նարինե Իշխանի Մարտիրոսյանի (ծնված 10.07.1962թ.), Բուրաստան Սամսոնի Բարսեղյանի (ծնված 17.02.1940թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Մարտիկյան փողոցի նրբանցքի հ.21 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 263.6քմ, որից 240քմ մակերեսով հողամասը Ռոբերտ Իշխանի Մարտիրոսյանին, Էդուարդ Իշխանի Մարտիրոսյանին, Նարինե Իշխանի Մարտիրոսյանին, Բուրաստան Սամսոնի Բարսեղյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է: Օրինական հողամասին կից օգտագործվող 23.6քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, 25.04.2007թ. ժառանգության իրավունքի վկայագիրը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման 12.12.2008թ. հ.373, Երևանի քաղաքապետարանի <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 16.04.2009թ. հ.20/2-Ե-248 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 10.04.2009թ. հ.20-Ել-3211 եզրակացությունը, համաձայն որի Մարտիկյան փողոցի նրբանցքի հ.21 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Մարտիկյան փողոցի նրբանցքի հ.21 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Ռոբերտ Իշխանի Մարտիրոսյանի, Էդուարդ Իշխանի

Մարտիրոսյանի, Նարինե Իշխանի Մարտիրոսյանի, Բուրաստան Սամսոնի Բարսեղյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 240քմ մակերեսով հողամասին կից 23.6քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 23.6քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Մարտիկյան փողոցի նրբանցքի հ.21 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Մարտիկյան փողոցի նրբանցքի հ.21 տուն>>։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Ռոբերտ Իշխանի Մարտիրոսյանի, Էդուարդ Իշխանի Մարտիրոսյանի, Նարինե Իշխանի Մարտիրոսյանի, Բուրաստան Սամսոնի Բարսեղյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Մալաթիա-Սեբաստիա թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ